ՄՀԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պ. գ. թ., դոցենտ,
Արցախի ժուռնալիստների միության
վարչության անդամ
«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
հումանիտար ամբիոնի վարիչ
Արցախի Հանրապետություն, Շուշի, Մուրացան 2
Էլ. հասցե՝ kachar.gk.shushi@mail.ru
ՆԱՆԵ ՄՀԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ լրագրության բաժնի ուսանողուհի
Էլ. հասցե՝ naneharutyunyan04@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.12.2020, գրախոսվել է 08.02.2021,
ընդունվել է տպագրության 10.04.2021

ՇՈՒՇԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԹԵՄԱՆ ԱՅՆՕՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերի և այնօրյա պարբերական մամուլում դրանց անդրադարձների ու հայեցակարգային մոտեցումների վերաիմաստավորման պահանջով, անցյալի լույսի տակ 2020 թ. աշնանը մեր պետականությանը պատուհասած աղետի պատճառահետևանքային կապը ճիշտ գնահատելու և հասկանալու անհրաժեշտությամբ:

1920 թ. դեպքերին անդրադարձած պատմաբաններն ու այլ հեղինակները թեև օգտագործել և ընդարձակ մեջբերումներ են կատարել Շուշիի կոտորածների վերաբերյալ ժամանակի պարբերական մամուլի հրապարակումներից, բայց, ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, նրանց տեսադաշտից դուրս են մնացել ինչպես հղված պարբերականների առանձին համարներ, այնպես էլ այն ժամանակվա այլ հրատարակություններ: Մյուս կողմից՝ վերոհիշյալ մեջբերումները հիմնականում բանաքաղաքական ու գեղատեսիլ բնույթ են կրում, ընդամենն ընտրովի փաստերի արձանագրումներ են և վերլուծության կամ համադրման չեն ենթարկվել, մինչդեռ առանձին հրապարակումներ լույս են

սփռում այնպիսի հիմնահարցերի վրա, որոնք հայ պատմագրությունն ինչ-ինչ պատճառներով չի պարզաբանել կամ շրջանցել է: Մեր խնդիրն է վերլուծության ենթարկել և գիտական շրջանառության մեջ դնել 1920 թ. Շուշիի ողբերգության մասին այն ժամանակվա պարբերական հրատարակությունների՝ նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել հայ պատմագրության առաջ ծառացած մի շարք հիմնահարցեր և ամբողջացնել մասնավորապես Շուշիի կործանման իրական պատճառների, անցյալի ողբերգությունից բխող անհրաժեշտ դասերի մասին մեր պատկերացումները:

Այն ժամանակվա հայ պարբերական հրատարակությունների հրապարակումները տարբեր ծավալով ու հաճախադեպությամբ օգտագործել են ինչպես ականատես-հուշագրողներ Արսեն Միքայելյանը[1], Հարություն Թումյանը[2], Գրիգոր Հովհաննիսյանը[3], այնպես էլ Բագրատ Ուլուբաբյանը[4], Համլետ Հարությունյանը[5], Հրաչիկ Սիմոնյանը[6], Հրանտ Աբրահամյանը[7] և ուրիշ պատմաբաններ[8], որոնք, սակայն, սահմանափակվել են ոչ միայն արդեն իսկ շրջանառված նույն հրապարակումներով, այլև դրանց տեղեկությունների վրա խարսխված գրեթե նույնանման մեկնաբանություններով:

Արցախի 1918-1920 թվականների դեպքերին այն ժամանակվա պարբերական մամուլի նյութերի հիման վրա անդրադարձած հեղինակներից հատկանշելի է Արցախի պարբերական մամուլի հմուտ ուսումնասիրող, բանասիրական գիտությունների դոկտոր Սմբատ Ավագյանը[9]:

Շուրջ երեք տասնյակ[10] պարբերական հրատարակություններ ունեցած Շուշի քաղաքի կործանումը, որի ընթացքում հրկիզվեցին ու ավերվեցին նաև հինգ տպարանները, մինչև այդ մեծ աղետը գոյատևած պարբերականների խմբագրությունները (ըստ երևույթին, սպանվեցին կամ մազապուրծ փախան նաև դրանց աշխատակիցներից շատերը), ընդհատեց նաև քաղաքի հրատարակչական գործը, հրդեհի ճարակ դարձան մեր ժողովրդի մտավոր ժառանգության անգին գոհարները, ուստի մեզ չեն հասել տեղի պարբերական մամուլի 1920 թ. մարտով թվագրված նմուշներ: Մնում է մեզ հետաքրքրող տեղեկույթը որոնել Հայաստանի առաջին հանրապետությունում և Վրաստանում (հատկապես մայրաքաղաք Թիֆլիսում) խնդրո առարկա ժամանակամիջոցում լույս տեսած պարբերական հրատարակություններում*: Երևանում լույս տեսնող «Յառաջ», «Ռազմիկ» և Թիֆլիսում հրատարակվող «Աշխատավոր», «Նոր աշխատավոր», «Մշակ», «Արձագանք» և այլ թերթերից հնարավորինս քաղել ենք ուշագրավ տեղեկություններ

[1] Հայրենիք 1923, №№ 7-9, 11-12:
[2] Թումյան 2008:
[3] Հովհաննիսյան 1971:
[4] Ուլուբաբյան 1994:
[5] Հարությունյան 1996:
[6] Սիմոնյան 1996:
[7] Աբրահամյան 1996, Աբրահամյան 2003:
[8] Տեր-Գասպարյան 1993, Սևյան 1991, Կարապետյան 2000, Գևորգյան 2014, Բալայան 2017:
[9] Երեկոյան Երևան 1989, 4 դեկտեմբերի, № 278, Ավագյան 1991:
[10] Հարությունյան 2010, 42-53:
* «Մշակ» թերթին չենք անդրադարձել, քանի որ դրան նվիրված առանձին զեկուցում արդեն ներկայացվել է:

Շուշիի մարտյան ոճրագործությունների, ինչպես նաև դրանց պատճառների վերհանման համար հետաքրքրություն ներկայացնող նախընթաց ու հաջորդած դեպքերի վերաբերյալ: Առաջադրված գիտական խնդրից դուրս ենք համարել հետագա տարիների և Սփյուռքի հրապարակումների դիտարկումը, որովհետև Շուշիի ողբերգական դեպքերին անմիջական անդրադարձները, մեր կարծիքով, ավելի իրատեսորեն են արտացոլում ու արտահայտում տվյալ ժամանակը, մարդկանց հոգեբանությունը և իրադարձությունների պատճառահետևանքային կապն ու իրավիճակային զարգացումների տրամաբանությունը:

Նպատակահարմար ենք գտել բանաքաղված նյութերը համակարգել ըստ այն հիմնախնդիրների լուսաբանման թեմատիկ ուղղությունների, որոնք տվյալ պահին արդիական հնչեղություն ունեն և կարող են ամբողջացնել մեր պատկերացումները Շուշիում արմենոցիդի քաղաքականության իրագործման արտաքաղաքական ու ներքաղաքական հանգամանքների, ինչպես նաև ադրբեջանական կեղծարարությունների և հիմնազուրկ պնդումների մասին և, իհարկե, նյութ տալ հետագա ուսումնասիրությունների համար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՂ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Այս բառեզրով կարելի է բնութագրել Շուշի քաղաքում և հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության ու էթնիկական զտումների քաղաքականությանը զուգահեռ լայնորեն կիրառած ապատեղեկատվական քարոզչությունը, որի նպատակն էր միջազգային հանրության՝ ի դեմս արտասահմանյան երկրների դիվանագիտական ներկայացուցիչների և զինվորական առաքելությունների, ինչպես նաև Այսրկովկասի տարածաշրջանի քաղաքականապես ակտիվ հասարակության ուշադրությունը շեղել հայ ազգաբնակչության ցեղասպանության հանցագործություններից և Հայաստանի առաջին հանրապետության, մասնավորապես՝ Զանգեզուրի և Արցախի դեմ նախաձեռնած ագրեսիայից:

Ադրբեջանը կիրառում էր նաև «տեղեկատվական շրջափակում»՝ նպատակ ունենալով թաքցնել հայ ազգաբնակչության, մեծ իմաստով նաև մարդկության դեմ մուսավաթական կառավարության գործադրած հանցագործությունները: Կարծում ենք, որ նպատակահարմար է հենց այստեղից էլ սկսել կոնկրետ օրինակների ներկայացումը, որոնք քաղված են հենց այն ժամանակվա պարբերական հրատարակություններից: Բավական հարուստ նյութ կա ՀՅԴ Վրաստանի կենտրոնական և Թիֆլիսի տեղական կոմիտեների տպագիր մարմին «Նոր աշխատավոր» բանվորական և գյուղացիական օրաթերթում, որի համարներից մեկը[1] մեզ հետաքրքրող թեմաների շուրջ բավական ուշագրավ տեղեկություններ է պարունակում: Ադրբեջանում «Նոր աշխատավոր» թերթի թղթակցի հաղորդմամբ՝ «Ղարաբաղի դեպքերի հետ միաժամանակ արգելված է Թիֆլիսի թերթերի վաճառումը»: Խոսքը, մասնավորապես, «Слово» և «Մշակ» թերթերի մասին է, որոնց վերջին

[1] Նոր աշխատավոր 1920, 8 ապրիլի թ., № 6:

համարները, ինչպես տեղեկացնում էր սեփական թղթակիցը, «ստացվել են անցյալ կիրակի օրը»: Կարծում ենք, որ սա շատ կարևոր տեղեկույթ է, ինչը վկայում է, որ Ադրբեջանն է կազմակերպել Շուշիում և Արցախի այլ բնակավայրերում խաղաղ հայ բնակչության կոտորածները և զինված ինքնապաշտպանության փորձերը «ապստամբություն» եզրաբառով նենգափոխումը: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները նենգափոխելով ստահոդ ու մտացածին տեղեկություններով և քաղաքական դեմագոգիայով հագեցած ճամարտակություններով՝ Ադրբեջանը փորձում էր խլացնել տեղեկատվության մյուս միջոցների ձայնը: «Ադրբէջանեան վերջին լուրեր» խորագրի տակ նույն նյութի շարունակությունը բացահայտում էր տեղեկատվությունը սահմանափակելու մեկ այլ եղանակ՝ «լրագրական սպեկուլյացիան»: 1920 թ. ապրիլի 7-ին «Слово» թերթի մեկ օրինակը վաճառվում էր 50-60 ռուբլով, իսկ «Աշխատավորը» «նույնիսկ կոնտրոբանտ չկա վաճառքում»: Այս տեղեկույթը համադրելով այլ փաստերի հետ՝ կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանն իր ոճրագործությունների մասին արտահոսքը հնարավորինս կանխելու նպատակ էր հետապնդում, ինչի մասին վկայում են հենց այն ժամանակվա պարբերական հրատարակությունների նյութերը: Այսպես, օրինակ՝ նույն համարում «Ղարաբաղի գոյամարտը» թղթակցությունում ծանուցվում էր, որ Բաքվում «գործ է դրւում բոլոր միջոցները ճշմարտութիւնը Ղարաբաղի անցքերի մասին թագցնելու համար»:

Դրանից բացի, ադրբեջանական քարոզչամեքենան ապատեղեկատվություն ու «հերքումներ» էր տարածում՝ փորձելով խեղաթյուրել հանցագործություններով ու արյունահեղություններով առլեցուն իրականությունը: Այսպես՝ «Ադրբէջանի տեղեկատու բաժնի «հերքումը»» հրապարակումից հայտնի է դառնում, որ Վրաց կառավարությանը կից ադրբեջանական առաքելության տեղեկատվական բաժինը բազմաբառ մի հաղորդագրությամբ «կտրուկ կերպով» հերքել է Բաքվում, Գանձակում և այլուր կատարվող բռնությունների մասին եղած բոլոր լուրերը և պնդել, որ ամեն տեղ հանգստություն է տիրում: «Նոր աշխատավոր» թերթի խմբագրությունն իր հերթին հրապարակայնորեն հայտարարել է, որ այդ հաղորդագրությունը «ամբողջովին մտացածին է և չի համապատասխանում իրականութեան»: Միաժամանակ խմբագրությունը անհերքելի փաստերի հիման վրա պնդել է, որ «բոլոր տեղեկութիւնները, որոնք տպագրւած են եղել «Ոճրապատում», «Ադրբէջան», «Վերջին լուրեր» «Ադրբէջանեան Նամակներ» բաժիններում և ապացուցում են հարիւրաւոր հայերի անհետացումներն ու մասսայական կոտորածները Նուխու, Արէշի (Ճալէթ, Վարդաշէն) և Գանձակի գաւառներում՝ հիմնւած են անվիճելի տւեալների վրայ»:

Ադրբեջանական հաղորդագրության հիմնական փաստարկը «շնորհակալական հեռագիրներն» են, որոնք թխվում էին ոճրալից իրականությունը քողարկելու և թիրախային լսարանին մոլորեցնելու նպատակով: Այդ կապակցությամբ ուշագրավ են ոչ միայն «Նոր աշխատավոր» թերթի խմբագրության այն դիտարկումը, որ ««շնորհակալական հեռագիրները», որոնց մասին խօսում է տեղեկատու բաժինը, արդիւնք են այնպիսի «բարի կամեցողութեան», ինչպիսին գործադրւում է Նուխում, հայերի գոյքերը բռնագրաւելիս», այնպես էլ նույն համարում «Ոճրապատում»

խորագրի տակ տպագրված «Նորից Նուխի-Արէշի զոհերը» թղթակցության տեղեկությունները:

Թերթի նույն համարում առանձին արտատպված է նաև խնդրո առարկա հաղորդագրության տեքստի հայերեն թարգմանությունը: Այդտեղ աչքի է զարնում բառերի շահարկումը, որ բնորոշ է թուրք-ադրբեջանական կեղծապատիր քարոզչությանը: «Բագւում, ինչպէս և Գանձակում ու Ադրբէջանի միւս քաղաքներում կատարեալ հանգստութիւն է տիրում» ոչ պատահական շեշտադրումներով պնդումը աղաղակող կեղծիքը և սուտը մեկ ճիշտ տեղեկությամբ փաթեթավորված մատուցելու պարզագույն հնար է, որի մասին խոսելու հիմք է տալիս նույն թերթի հետևյալ դիտարկումը. «Ճիշտ է միայն այն, որ մասսայական կոտորածներ տեղի չեն ունեցել Բագւում՝ շնորհիւ Ուսուբբէկովի ուլտիմատումի և դաշնակիցների պահանջի, իսկ Գանձակում՝ շնորհիւ գեն. Մակաևի»[1]:

Շարունակելով խնդրո առարկա հաղորդագրության քննարկումը՝ չենք կարող չնկատել ադրբեջանական քաղաքական դեմագոգիայի աղաղակող արտահայտությունները, որոնք, մեր կարծիքով, անմիջապես մատնում են իրականությունը խեղաթյուրելու Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության բուն նպատակը: «Տեղական իշխանութիւններն ու Ադրբէջանի կառավարութիւնը ձեռք են առել և ձեռք են առնում ամենակտրուկ միջոցներ կարգը պահպանելու և, առանց ազգի խտրութեան, հանրապետութեան բոլոր քաղաքացիների կեանքն ու գոյքն ապահովելու»,-լսարանին մոլորեցնում են հաղորդագրության հեղինակները: Այս համապատկերում ներկայացվել է նաև Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերի ադրբեջանական մեկնաբանությունը: «Ղարաբաղի մահմեդական խաղաղ ազգաբնակչութեան և Ասկեարանում, Շուշում, Խանքենդում և այլ կէտերում բացառապէս կարգը պահպանելու համար դրուած ադրբէջանեան փոքրաթիւ ու բաժան-բաժան զորամասերի վրայ հայ ապստամբների կատարած դաւաճանական յարձակումից և զորքերին զինաթափելուց և մասամբ կոտորելուց, մասամբ էլ գերի վերցնելուց յետոյ Ադրբէջանի կառաւարութիւնը այնտեղ զորքեր ուղարկեց ապստամբութիւնը ճնշելու, մեղաւորներին պատժելու և կարգը վերականգնելու համար»[2]:

Ներկայացնելով 1920 թ. ապրիլի սկզբներին Արցախի դեմ ագրեսիայի հետևանքով բացված ռազմաճակատում տիրող իրավիճակը՝ հաղորդագրության մեջ նշվել է. «Ներկայումս Ասկեարանի բարձունքները գտնւում են Ադրբէջանի զորքերի ձեռքին»: Հաղորդագրությունից տպավորություն է ստեղծվում, թե Ադրբեջանն օրինաչափ գործողություններ է իրականացնում «խախտված կարգը վերականգնելու» համար և չի թաքցնում անգամ հետագա գործողությունները, բայց իրականում հանրությանը և, մանավանդ, հայկական կողմին դնում էր կատարված փաստի առաջ: «Ասկեարանում մնացած զորամասից բացի, բոլոր մնացած զորամասերը գնում են Խանքենդի և Շուշու վրայ՝ իրագործելու կառաւարութեան կողմից իրենց վրայ դրուած պարտականութիւնը»: Այս մեջբերումն ուշագրավ է նաև մեկ այլ տեսանկյունից: Փաստորեն, պաշտոնապես ընդունվում

[1] Հմմտ.՝ Նոր աշխատավոր, 1920, № 6:
[2] Հմմտ.՝ Աշխատավոր 1920, 24 մարտի, № 67:

է Ադրբեջանի կառավարության և կանոնավոր զորքերի մեղսակցությունը Արցախի դեմ ագրեսիային ու խաղաղ բնակչության ցեղասպանության հանցագործություններին: Ապահովագրելով իրենց կառավարությանը պատասխանատվության ենթարկելուց՝ հաղորդագրության հեղինակները փորձել են հերթական կեղծիքը փաթաթել ընթերցողի վզին. «Սրան պէտք է աւելացնել, որ խաղաղ ազգաբնակչութեան դէմ, որոնք չեն մասնակցել ապստամբների դաւաճանական արարքին, որևէ ռեպրեսիա ձեռք չի առնված»: Մեջբերված հատվածներում ակնհայտ կեղծիքն ու սուտը պարզ են Արցախի 1918-1920 թթ. պատմությանը շատ թե քիչ ծանոթ յուրաքանչյուր ողջամիտ մարդու համար, իսկ նրանք, ովքեր նոր են ծանոթանում այդ ամենին, ասվածի մասին կարող են օբյեկտիվ կարծիք կազմել հետևյալ օրինակներից: Հայտնի փաստ է, որ 1920 թ. ապրիլի 3-ին Ադրբեջանի գրեթե ամբողջ զորքերի ներգրավմամբ Ասկերանը գրավելուց հետո ագրեսորները ներխուժեցին նաև Շուշի և սրախողխող արեցին բանտարկված հարյուրավոր խաղաղ բնակիչների՝ կանանց, երեխաների ու ծերերի[1]: Ադրբեջանի կանոնավոր զորքերի՝ Շուշի ներխուժելուց հետո դաժան հաշվեհարդարի զոհ դարձան նույնիսկ այն քաղաքացիները, որոնք ոչ միայն որևէ առնչություն չեն ունեցել զինված ինքնապաշտպանության հետ, այլև բարիդրացիություն, այլազգիների հանդեպ հանդուրժողականություն են քարոզել: Այդ գործիչների թերևս ամենակարկառուն ներկայացուցիչները Ալեքսանդր Ծատուրյանն ու Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանն էին, որոնց գազանաբար սպանել էին: Իսկ եպիսկոպոսին գլխատել և գլուխը ցից հանած շրջել էին ավերված քաղաքի մահմեդական թաղամասերում: Սրանք եզակի օրինակներ չեն, այդպիսի ոճրագործությունների մասին բազմաթիվ տեղեկությունների կարելի է հանդիպել այն ժամանակվա պարբերական մամուլի էջերում[2]:

Եվ զանգվածային կոտորածների ու ռազմական հանցագործությունների արյունալի համապատկերում ավելի ցայտուն է երևակվում ադրբեջանական անսահման ցինիզմը. «Ադրբէջանի կառավարութիւնը, Ղարաբաղ զորամասեր ուղարկելով, ղեկավարուել է մի նպատակով՝ վերջ տալ անիշխանութեանը, որ առաջացել է հայ ապստամբների դաւաճանական վարքով»: Ակներև է ադրբեջանական դիվանագետների քարոզչական հնարքը՝ ամեն ինչ բարդել հայերի, տվյալ դեպքում՝ «ապստամբների» վրա և ըստ ամենայնի արդարացնել Ադրբեջանի կառավարության 1918 թ. ի վեր գործադրվող ցեղասպանական քաղաքականությունը ու կանոնավոր զորքերի ռազմական հանցագործությունները: Ճանապարհներին հայ ուղևորների սպանությունները, խաղաղ բնակավայրերի վրա ավազակային հարձակումները, հանրային ու մասնավոր ունեցվածքի կողոպուտի կամ դիտավորյալ ոչնչացման բազմաթիվ դեպքերը, տնտեսական շրջափակումը և այն ժամանակվա պարբերական մամուլում արձանագրված՝ ադրբեջանցիների այլ հանցագործությունների քրոնիկոնը անվիճելի կերպով փաստում է, որ անիշխանությունը, գույքի ու անձնական կյանքի անպաշտպանվածությունը, քրեածին իրավիճակը ստեղծվել են հենց Ադրբեջանի կառավարության նվաճողական, ահաբեկչական

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1469, գ. 1, թ. 35:
[2] Նոր աշխատավոր, 1920, № 8, № 10, № 11, № 13 և այլն:

ու էթնիկ զտումների քաղաքականության պատճառով, որի միակ նպատակը պատմական Հայաստանի տարածքների՝ Արցախի, Զանգեզուրի, Նախիջևանի բռնազավթումն էր և Արևելյան Այսրկովկասի մյուս հայաբնակ շրջանների ժողովրդագրական կազմի փոփոխումը հօգուտ մահմեդական բնակչության:

ՆԱԽԱՀԱՐՁԱԿ ԿՈՂՄԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Հայ պարբերականները պատեհաժամորեն լուսաբանել են ադրբեջանական կողմի ագրեսիվ, իրենց բնույթով ցեղասպանական գործողությունները, որոնց հավաստիությունը հետագայում հաստատվել են ժամանակակիցների, այդ թվում՝ ըստ էության տեղի ունեցած դեպքերում շահագրգռվածություն չունեցած հեղինակների բազմաթիվ վկայություններում, նորահայտ արխիվային փաստաթղթերում և արժանահավատ այլ նյութերում պահպանված համապատասխան տեղեկություններով: Ադրբեջանական կողմն իր ոճրագործությունները քողարկելու նպատակով դրանք վերագրել է հայկական կողմին և զրպարտել ցեղասպանական գործողություններից իրականում տուժած հայ բնակչությանը: Դեռևս Թուրքիայում լայնորեն կիրառվող քարոզչական այս ցինիկ մեթոդի ընդօրինակումը Ադրբեջանում ազդեցություն է գործել որոշակի շրջանակների, այդ թվում նաև, դժբախտաբար, հայերի վրա, որոնք, մի պահ հավատալով ոճրագործների կեղծիքներին, միամտաբար կասկածել են հայկական կողմի բողոքների հավաստիությանը: Այդ սովորությունը հասել է մինչև մեր օրերը, և հազվադեպ չեն այն հայերը, որոնք տարակուսում են, թե իրենք (ադրբեջանցիները) նույնն են ասում մեր մասին, ինչ-որ մենք՝ նրանց մասին: Եվ այդպիսի մարդիկ նեղություն չեն տալիս իրենց խորամուխ լինելու, թե որ կողմն է կապկում մյուս կողմին, ով է ոճրագործը, և ով՝ անմեղ զոհը: Անիրազեկ մեր հայրենակիցների հետ պետք է հետևողական աշխատանք տանել, բացել նրանց աչքերը և օգնել զանազանելու ճշմարտությունը կեղծիքից, իրականությունը՝ պատրանքներից, դահճին՝ զոհից:

Այս տեսակետից մենք կրկին անդրադառնում ենք «ապստամբությունից» զինված ինքնապաշտպանությունը տարբերակելու խնդրին: Զինված ինքնապաշտպանությունը բոլոր ազգերի անկապտելի իրավունքն է, որից օգտվել է նաև հայ ժողովուրդը ամենուր, այդ թվում նաև՝ Արցախում: Սակայն դա նախահարձակ Ադրբեջանը նենգափոխել է «ապստամբություն» եզրույթով՝ իր ցեղասպանական քաղաքականությունը քողարկելու, պատասխանատվությունից խուսափելու և արյունահեղության մեղավորների խարանը հայերի գլխին բարդելու համար: Հենց այս առումով ադրբեջանցի ոճրագործների կեղծիքի տարածմանն են ակամա նպաստում նրանք, ովքեր համառորեն դեռ խոսում են «ապստամբության» մասին, նույնիսկ կառչում շահագործվող ժողովուրդների «ապստամբության» միջազգային իրավունքից՝ չհասկանալով, որ դա մեր պարագայում միայն ադրբեջանցի կեղծարարների հերթական ստահոդ քարոզչության շահերին է ծառայում:

Այս խոսույթի համատեքստում ուշագրավ հրապարակումներ կարելի է գտնել այնօրյա պարբերական մամուլում: Այսպես, օրինակ՝ Հայ ժողովրդական կուսակցութեան օրգան «Ժողովուրդ» քաղաքական, հասարակական և գրական օրա-

թերթում այսպես են լուսաբանվել 1920 թ. մարտյան դեպքերը. «Ղարաբաղում սկսվել են արյունահեղ կռիվներ Ադրբեջանի զորքերի և հայ ազգաբնակության միջև: Կռիվները սկսվել են մարտի 20-ից և շարունակվում են մինչև այսօր: Զոհերի թիվը չափազանց մեծ է: Այս արյունահեղությունների պատճառը եղել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովի հրամանը, որով նա պահանջել է հայերից զինաթափ լինել և հանձնել բոլոր զենքերը: Ադրբեջանի զորքերը հրաման են ստացել զինաթափ անել հայերին ուժով: Այդ առիթ է տվել ուժեղ ընդհարումների, որոնք տեղի են ունենում ամբողջ Ղարաբաղում: Զանգեզուրի հայկական զինական ուժերը ուղևորվել են օգնության Ղարաբաղի հայության»[1]:

«Հառաջ» հասարակական, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթը ծանուցել է այն մասին, որ «Զանգեզուրցիներն ու ղարաբաղցիները միացած են», որի մասին ավետող հեռագիրը մեծ խանդավառությամբ կարդացվեց 1920 թ. ապրիլի 3-ին պառլամենտի նիստում: Այն բավական հետաքրքիր է ժամանակաշրջանի հիմնական միտումները հասկանալու համար, ուստի մեջբերում ենք ամբողջովին.

«Հեռագիր Գորիսից՝ տրված մարտի 31-ին

Խորին հրճվանքով շտապում ենք ուրախացնել ձեզ, որ Զանգեզուրի և Ղարաբաղի բոլոր ճակատներում ունեցել ենք փառավոր հաղթություններ:

Ղարաբաղի և Զանգեզուրի փառապանծ զավակները հրաշքներ են գործում: Թշնամու բոլոր հարձակումները հետ են շպրտված, ընդհակառակը, մերոնք, հարձակման դիմելով, ջարդել են ադրբեջանական զորքը, վերցրել են գերիներ և քշել թշնամուն մինչև Հաքյարի գետը:

Զանգեզուրի և Ղարաբաղի մեջ ընկած երկրամասը մաքրված է թշնամուց: Մենք գրավել ենք Դամիրչիլարը, Կաբարին, Դոնդարանը, Խաչալասանը, Զանգիլանը մինչև Բարտազ: Այս րոպեին գրավեցինք հռչակավոր Մարկիզն ու Ավդալլարը:

Շուշու խճուղին մեր ձեռքին է: Բոլոր ճակատներում կռիվը շարունակվում է: Ասկերանը Ղարաբաղի գյուղացիության ձեռքին է: Թշնամու բոլոր հարձակումները փշրվեցին Ասկերանի ամրությունների առաջ: Ղարաբաղի գյուղացիությունը շրջապատել է Մալիբեյլուն, Խանքենդին և Շուշին: Քաջարի զանգեզուրցիներն այսօր առավոտյան վաղ, Խծաբերդի ուղղությամբ հարձակման դիմեցին և միացան ղարաբաղցիներին և ընդհակառակը՝ կալատարասցիները (բերդձորցիները.- Մ.Հ., Ն.Հ.) Ղարաբաղից անցան Զանգեզուր:

Համառ կռիվները շարունակվում են, հետևանքների մասին կհաղորդենք: Օրդուբադի մոտ գտնվող շրջանը գրավված է մեր կողմից:

Զանգեզուրը պատրաստ է մեռնել Հայաստանի փառքի և պատվի համար:

Զանգեզուրի Ազգային խորհուրդ[2]»

Ադրբեջանի նախահարձակ լինելու և Արցախի բոլոր ճակատներով մարտեր սկսելու մասին է վկայում նաև հետևյալ հրապարակումը. *«Մոտ օրերի ընթացքում Թիֆլիսում անդրկովկասյան երեք հանրապետությունների ընդհանուր համաձայ-*

---

[1] Ժողովուրդ 1920, № 48:
[2] Յառաջ 1920, № 72:

նությամբ պետք է կայանա կոնֆերանս, որը նպատակ ունի հիշված հանրապետությունների միջև ծագած բոլոր վիճելի հարցերը լուծելու, իմիջիայլոց, նաև հողային (տերիտորիալ) խնդիրները: Հակառակ սրան՝ Ադրբեջանի կառավարությունը, խախտելով անցյալ տարվա օգոստոս 22-ին Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի հետ կնքած համաձայնությունը, որոշել է զենքի ուժով խլել հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը: Մարտ ամսի 20-ին Ադրբեջանի կառավարությունն իր կանոնավոր զորքը և զինված բանդաները կենտրոնացնելուց հետո, Ղարաբաղի հայ ազգաբնակության ներկայացրեց վերջնագիր զինաթափման մասին: Ազգաբնակությունը նման վերջնագիրը համարելով օգոստոս 22-ի համաձայնության բացահայտ խախտումն և այդ խախտումը համարելով նախասկիզբ նախորոշված ջարդի՝ մերժեց այդ ապօրինի պահանջը: Ադրբեջանը ստանալով մերժումն՝ բռնի ուժով սկսեց հայ ազգաբնակության զինաթափումը և սկսեց ընդհանուր առաջխաղացումն Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ: Ստացված վերջին տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանի կանոնավոր զորքը և մահմեդականների զինված բանդաները առաջ խաղալով Զանգեզուրի և Ղարաբաղի վրա՝ ամբողջ ճակատով ոչնչացնում են գյուղերը և ջարդում են խաղաղ հայ ազգաբնակությունը: Շուշում ջարդված է ամբողջ ազգաբնակությունը: Այս առաջխաղացման նպատակն է նախապես գծված ծրագրով՝ կատարելապես հնազանդեցնել հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը՝ հակառակ ազգաբնակության, խաղաղարար կոնֆերանսի և Լորդ Քըրզոնի վերջին հեռագրի տրամադրության:

Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով Հայաստանի կառավարության խաղաղասիրությունից, որի ցանկությունները և ձգտումները միշտ ուղղված են եղել անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև եղած վիճելի հարցերը խաղաղությամբ լուծելու կողմը, Ադրբեջանի կառավարությունը նորից հրդեհ է նետում Անդրկովկասում, որը կարող է չափազանց աղետաբեր լինել իր հետևանքներով: Իմ կառավարության անունից նպատակ ունենալով կանխել ամբողջ Անդրկովկասին սպառնացող աղետը, խնդրում եմ Ձեզ, Ձեր կողմից ցույց տալ հնարավոր աջակցությունը Ադրբեջանի կառավարության ցույց տալու համար Ղարաբաղի և Զանգեզուրի վրա հետագա առաջխաղացման անմիջապես դադարեցնելու անհրաժեշտությունը՝ հրաժարվելով Ղարաբաղի խնդիրը զենքի ուժով լուծելու փորձից:

Արտ. Գործ. Նախ. Ա. Խատիսյան[1]»

Թուրքական (տաճկական) բանակի հրամանատարական կազմի բազմաթիվ բարձրաստիճան, միջին ու կրտսեր սպաներ ծառայության էին ընդունվել Ադրբեջանի զինված ուժերում և, փաստորեն, գլխավորում էին հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը նաև Արցախում: Ադրբեջանի զինված ուժերում թուրքական բանակի բարձրաստիճան սպաների ընդգրկման (անձնակազմին ուսուցանելու և հայկական խաղաղ բնակավայրերի վրա զինված հարձակումները գլխավորելու նպատակով) մասին վկայում են իրազեկ ժամանակակիցները: Այսպես, օրինակ՝ Թիֆլիսում ադրբեջանական պատվիրակության հետ ոչ պաշտոնական հանդիպման մասնակից, Թիֆլիսում Հայաստանի դիվա-

[1] Յառաջ 1920, 2 ապրիլի, № 69:

նագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանը գրել է. «Իսկ մենք, մեր կողմից անվանեցինք Նուրի և Խալիլ փաշաներին և Խալիլ բեյին, և ուրիշներին, որոնք լինելով տաճիկ կառավարության սպաներ, իրոք հանդիսանում են իբրև դրսի ագիտատոր, որոնք գրգռում են տեղական ժողովրդին Ղարաբաղում և Շարուր-Նախիջեւանում Հայաստանի կառավարության դեմ և պահանջեցինք դրանց հեռացումը հիշյալ վայրերից»: Այս վկայության հատկապես հետևյալ հատվածը հաստատում է Ադրբեջանի զինված ուժերում թուրքական բանակի ռազմական հանցագործներին ծառայության ընդունելու հաստատ ոչ եզակի փաստերը: «Նրանք փորձեցին պաշտպանել այդ անձանց,-շարունակել է Լևոն Եվանգուլյանը,- առարկելով, որ նրանք ներկայումս այլևս կապ չունեն թուրք կառավարության հետ և լոկ իբրև զինվորականներ մտել են Ադրբեջանական ծառայության մեջ»[1]:

Թիֆլիսի «Մշակ» և «Աշխատավոր» թերթերը ներկայացրել են Ադրբեջանի հեռագրական գործակալության հաղորդագրությունն այն մասին, որ «…մարտի 20-ին Աղդամում, Շուշում և Խանքենդում ձերբակալուել են շատ հայեր և թուրքեր (մահմեդականներ), որոնք պղտորում են հայերի մտքերը Ղարաբաղում: Այդ անձինք յանձնուելու են զինուորական դատարանին՝ երկու ազգերի խաղաղ բնակիչներին կոտորել տալու համար»[2]:

Սա ապատեղեկատվության դասական օրինակ է, որը տարածվում էր հանրությանը մոլորեցնելու և ցեղասպանական գործողությունները քողարկելու նպատակով:

Երբ մենք պնդում ենք հայերի «ապստամբության» առասպելի մասին, հիմք ենք ընդունում այն ժամանակվա պարբերական մամուլի օպերատիվ հրապարակումները: Այսպես՝ «Մշակ» թերթը գրել է. «Ադրբէջանի կառավարութեան արտաքին գործերի մինիստր Խան-Խոյսկին Ղարաբաղի դէպքերին տալիս է բոլորովին այլ լուսաբանութիւն, մատնանշելով, թէ իբր նախայարձակ հայերն են եղել»[3]:

Հայերի ապստամբության մասին առասպելը սկսել է ուռճացվել ու տարածվել 1920 թ. մարտ ամսից էլ շատ առաջ, ինչը վկայում է, որ Ադրբեջանի ծայրահեղական տրամադրված կառավարությունը Սուլթանովի միջոցով նախապատրաստում էր հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածներ նրանց «ապստամբությունը» ճնշելու և կարգը պահպանելու պատրվակի տակ: Այդ մասին են վկայում ոչ միայն ժամանակի պարբերական մամուլի նյութերը, այլ նաև ադրբեջանցիների հրապարակած վավերագրերը:

Մամուլի հրապարակումները վկայում են, որ Ղարաբաղում «ապստամբության» մասին Սուլթանովի տեղեկատվական-հոգեբանական գրոհն սկսվել էր տակավին 1920 թ. հունվարից, եթե ոչ ավելի վաղ[4]:

Երևանից Լեռնային Ղարաբաղի գյուղեր են ժամանել առաջապահ ուժեր, որոնք տեղի հայերին ապստամբության կոչ են անում (В селения Нагорного Карабаха прибыли эшелоны из Эривани, призывавшие местных армян к восстанию,

---

[1] ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 212, թ. 42 (հմմտ.՝ Յալանուզյան Մ., Ադրբեջանը պատրաստ է գրոհել, https://republic.mediamax.am/story/98/[ներբեռնումը՝ 21.02.2020 թ.]):

[2] Մշակ 1920, 28 մարտի, № 8, Աշխատավոր1920, 24 մարտի, № 67:

[3] Մշակ 1920, 4 ապրիլի, № 9:

[4] Նոր աշխատաւոր 1920, № 14:

(телеграфное сообщение Карабахского Генерал-Губернатора от 8 января, № 8). [259 - 260])[1]:

Հայ պատմաբանների և ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել են բազմաթիվ հետաքրքիր և, ամենակարևորը, դեռևս չշրջանառված տեղեկություններ տվող նյութեր, որոնք հրապարակվել են «Բանբեր» գրական, գեղարվեստական և հասարակական ամսագրի, «Ռազմիկ» զորական թերթի, «Աշխատավորի ձայն» բանվորական և գյուղացիական օրաթերթի, «Երիտասարդ բանվոր» բանվոր և գյուղացի երիտասարդական կոմունիստական միության կովկասյան շրջանային և Բաքվի կոմիտեների օրգանի, «Էջմիածին» շաբաթաթերթի, «Հայաստանի կոօպերացիա» կոոպերատիվ երկշաբաթաթերթի և այլ պարբերականների էջերում:

Ավելի քան հրատապ են ոչ միայն պարբերականների արժեքավոր տեղեկությունները գիտական շրջանառության մեջ դնելը, այլև դրանք նորովի մեկնաբանելը և անցյալի իրադարձությունները նորահայտ փաստերի լույսի ներքո քննելը: Իհարկե, այս ուղղությամբ աշխատանքները դեռ շարունակվում են, որոնք ոչ թե եզակի, այլ համընդհանուր ու նպատակասլաց բնույթ պետք է կրեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 212, թ. 42 (հմմտ.՝ Յալանուզյան Մ., Ադրբեջանը պատրաստ է գրոհել, https://republic.mediamax.am/story/98/[ներբեռնումը՝ 21.02.2020 թ.]):
2. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1 (Բալաեան Գ., Յոլեան Զ., Ղարաբաղի դէպքերի վերաբերյալ սկսած 1918 թ. յունիս ամսից մինչև 1920 թ. մայիսի 26-ը), թթ. 1-41:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1. Ղարաբաղում, Աշխատավոր 1920, 24 մարտի, № 67, էջ 2 (հմմտ.՝ Նոր աշխատավոր):
2. Ավագյան Ս., Ղարաբաղ. փաստերի տրամաբանությունը (պարբերական մամուլի նյութերով), Երեկոյան Երևան 1989, 4 դեկտեմբերի, № 278, էջ 3:
3. Նոր արիւնահեղութիւններ Ղարաբաղում, Ժողովուրդ 1920, 27 մարտի, № 48, էջ 3:
4. Հայրենիք 1923, №№ 7-9, 11-12, Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն), մայիս, № 7, էջ 156-167, յունիս, № 8, էջ 110-123, յուլիս, № 9, էջ 117-121, սեպտեմբեր, № 11, էջ 110-119, հոկտեմբեր, № 12, էջ 118-127:
5. Մշակ 1920, 28 մարտի, № 8:
6. Մշակ 1920, 4 ապրիլի, № 9:
7. Խմբագրական. Ղարաբաղի դէպքերը, Յառաջ 1920, 1 ապրիլի, № 68, էջ 1:
8. Անցքերը Ղարաբաղում. Ալ. Խատիսեանի հեռագիրը դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին, Յառաջ 1920, 2 ապրիլի, № 69, էջ 2:
9. Անցքերը Ղարաբաղում. Զանգեզուրցիներն ու ղարաբաղցիները միացած, Յառաջ 1920, 6 ապրիլի, № 72:
10. Գեն. Մակաեւը Գանձակում, Նոր աշխատաւոր 1920, 8 ապրիլի, № 6, էջ 2:

[1] Буниятов 1990 (ред.), История Азербайджана по документам и публикациям, Баку: Элм, с. 260:

11. Ոճրապատում. Հայկական ջարդերը Ադրբեջանում. Կոտորածը Շուշում, Նոր աշխատաւոր 1920, 14 ապրիլի, № 8, էջ 2:
12. Ոճրապատում. Թէ ինչպես սկսւեց Շուշու կոտորածը, Նոր աշխատաւոր 1920, 16 ապրիլի թ., № 10, էջ 1-2:
13. Ադրբէջանեան նամակներ, Նոր աշխատաւոր 1920, 17 ապրիլի, № 11, էջ 2:
14. Շուշու դէպքերը (թիւրքական ինֆորմացիա), Նոր աշխատաւոր 1920, 20 ապրիլի, № 13, էջ 2:
15. Ադրբէջանեան նամակներ, Նոր աշխատաւոր 1920, 21 ապրիլի, № 14, էջ 4:
16. Աբրահամյան 1996, Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923 թթ., Երևան:
17. Աբրահամյան Հ. 2003, Մարտնչող Արցախը, Գիրք Ա, 1917-1923 /Խմբ.՝ Ա.Ի. Շահնազարյան; ՀՀ ԳԱԱ Պատմ. ին-տ., Երևան, Զանգակ-97, 340 էջ:
18. Ավագյան Ս. 1991, Ինչու չի ասվում ճշմարտությունը, Երևան, Եր. համալս. հրատ., 96 էջ:
19. Բալայան Վ. 2017, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 560 էջ:
20. Գևորգյան Հ. 2014, Դրո, Երևան, ԵՊՀ, 920 էջ:
21. Թումյան Հ. 2008, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ. (պատմական ակնարկ), Երևան, Անտարես, 336 էջ:
22. Կարապետյան Բ. 2000, Շուշի բերդաքաղաքը (պատմությունը մինչև 1920 թ.), Երևանի համալս. հրատ., Երևան, 2000, 350 էջ:
23. Հարությունյան Հ. 1996, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, Գիտություն, 299 էջ:
24. Հարությունյան 2010, Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.): Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 240 էջ:
25. Հովհաննիսյան Գ. 1971, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, Եր. համալս. հրատ., 296 էջ:
26. Սիմոնյան Հ. 1996, Անդրանիկի ժամանակը: 2 գ., Գիրք 2, Երևան, Կաիսա, 830 էջ:
27. Սևյան Վ. 1991, Շուշի (Պատմական ակնարկ), Երևան, Հայաստան, 128 էջ:
28. Տեր-Գասպարյան Ռ. 1993, Շուշի քաղաքը (Շուշիի հիմնադրման պատմությունը), Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 125 էջ:
29. Ուլուբաբյան Բ. 1994, Արցախյան գոյապայքարը, հ Ա,Երևան, Գիր գրոց, 300 էջ:
30. Буниятов 1990 (ред.), История Азербайджана по документам и публикациям, Баку: Элм, 260 с.:

Ամփոփում

Շուշիի կործանման թեման այսօրյա հայկական պարբերական հրատարակությունների էջերում

Միեր Հարությունյան, Նանե Հարությունյան

Շուշի քաղաքում և հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության ու էթնիկական զտումների քաղաքականությանը զուգահեռ՝ լայնորեն կիրառվում էր ապատեղեկատվական քարոզչությունը, որի նպատակն էր միջազգային հանրության՝ ի դեմս արտասահմանյան երկրների դիվանագիտական ներկայացուցիչների և զինվորական առաքելությունների, ինչպես նաև Այսրկովկասի տարածաշրջանի քաղաքականապես ակտիվ հասարակության ուշադրությունը շեղել հայ ազգաբնակչության ցեղասպանության հանցագործություններից և Հայաստանի հանրապետության, մասնավորապես, Զանգեզուրի և Արցախի դեմ նախաձեռնած ագրեսիայից:

Ադրբեջանը կիրառում էր նաև «տեղեկատվական շրջափակում»՝ նպատակ ունենալով թաքցնել հայ ազգաբնակչության, մեծ իմաստով նաև մարդկության դեմ մուսավաթական կառավարության գործադրած հանցագործությունները: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները նենգափոխելով ստահոդ ու մտացածին տեղեկություններով և քաղաքական դեմագոգիայով հագեցած ճամարտակություններով՝ Ադրբեջանը փորձում էր խլացնել տեղեկատվության մյուս միջոցների ձայնը: Ադրբեջանն իր ոճրագործությունների մասին արտահոսքը հնարավորինս կանխելու նպատակ էր հետապնդում, ինչի մասին վկայում են հենց այն ժամանակվա պարբերական հրատարակությունների նյութերը:

Դրանից բացի՝ ադրբեջանական քարոզչամեքենան ապատեղեկատվություն ու «հերքումներ» էր տարածում՝ փորձելով քողարկել Ադրբեջանի հանցագործություններով ու արյունահեղություններով առլեցուն իրականությունը:

Ադրբեջանական խեղաթյուրումների հիմնական փաստարկը «շնորհակալական հեռագիրներն» էին, որոնք թխվում էին ոճրալից իրականությունը քողարկելու և թիրախային լսարանին մոլորեցնելու նպատակով:

Հիմնաբառեր. *Շուշի, պարբերական մամուլ, ցեղասպանություն, Ադրբեջան, ապատեղեկատվություն, մուսավաթական կառավարություն, ոճրագործություններ, տեղեկույթի արտահոսք, ոճրալից իրականություն*

Резюме

Тема разрушения Шуши на страницах тогдашних армянских периодических изданий

Мгер Арутюнян, Нане Арутюнян

Параллельно с проводимой Азербайджаном политикой геноцида и этнической чистки в Шуши почти во всех армянонаселенных районах широко использовалась дезинформационная пропаганда, чтобы отвлечь внимание международного сообщества в лице иностранных дипломатов, военных миссий и политически активных обществ в Закавказском регионе от геноцидных преступлений против армянского народонаселения, от агрессии против Республики Армения, в частности, Зангезура и Арцаха, инициированных Азербайджаном.

Азербайджан применял «информационную блокаду» для того, чтобы скрыть преступления, совершенные правительством «Мусават» против армянского населения, в широком смысле, против человечества.Фальсифицируя преступления против человечества с помощью ложной и надуманной информации и политической демагогии, Азербайджан пытался заставить замолчать другие средства массовой информации. Азербайджан стремился максимально предотвратить утечку информации о своих преступлениях, о чем свидетельствуют материалы периодических изданий того времени.

Кроме того, азербайджанская пропагандистская машина распространяла дезинформацию и «опровержения», пытаясь замаскировать действительность Азербайджана, которая полна преступлений и кровопролития.

Основным аргументом в пользу азербайджанских искажений стали «благодарственные письма», которые были составлены, чтобы прикрыть криминальную реальность и ввести в заблуждение целевую аудиторию.

Ключевые слова: *Шуши, периодика, геноцид, Азербайджан, дезинформация, правительство Мусават, преступления, утечка информации, криминальная реальность*

Abstract

The topic of the destruction of Shushi on the pages of the Armenian periodic publications existing at that time

Mher Harutyunyan, Nane Harutyunyan

In parallel with Azerbaijan's policy of genocide and ethnic cleansing in Shushi and in almost all Armenian-populated regions, disinformation propaganda was widely used, the aim of which was to divert the attention of the international community in the face of the military missions of foreign diplomats, as well as the politically active society in the Transcaucasian region, from

the crimes of genocide of the Armenian population and the aggression against the Republic of Armenia, particularly against Zangezur and Artsakh. Azerbaijan used an "information blockade" to hide the crimes committed by the Musavat government against the Armenian population, in a broad sense, against humanity. By falsifying crimes against humanity with the help of false and imaginative information and political demagoguery, Azerbaijan tried to drown out the voice of the other means of information.

Azerbaijan tried to prevent the leakage of information about its crimes as much as possible, as evidenced by the materials of the periodicals of that time. Azerbaijan aimed to prevent the leak of its crimes as much as possible, as evidenced by the materials of periodicals of that time. Besides, the Azerii propaganda machine was spreading disinformation and "disproofs" in an attempt to hide the reality of Azerbaijan, which is full of crime and bloodshed.

The main argument for the Azerbaijani distortions was the "letters of appreciation", which were compiled to cover up the criminal reality and mislead the target audience.

Keywords: *Shushi, periodicals, genocide, Azerbaijan, disinformation, the Musavat government, crimes, leakage of information, criminal reality*